

Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր

Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն / ՀՀ Արագածոտնի, Լոռու և Տավուշի մարզեր, 2016-2017 թթ. ջրամատակարարում/ IRFSP /TA/CQ-2016/016/1;
Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն /Գեղարքունիքի մարզ, 2016-2017թթ. ջրամատակարարման համակարգերի վերակառուցում / IRFSP /TA/CQ-2016/016/2;
Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն / Սյունիքի, Վայոց Ձորի և Շիրակի մարզեր, 2016-2017թթ. ջրամատակարարման համակարգերի վերակառուցում և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում/ IRFSP /TA/CQ-2016/016/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" ծրագիր ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՐ ԱՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

ՄԶՕՀ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ No -1673 P

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամից /այսուհետ՝ ՄԶՕՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱԾ/ իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

ՀՀ ԿԱ "Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ն /այսուհետ՝ ԾԻԳ/ ՀՀ Արագածոտնի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի համայնքային ջրամատակարարման և Սյունիքի մարզերի ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացման որակի տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնելու համար Խորհրդատուների ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով բոլոր շահագրգիռ կազմակերպություններին հրավիրում է ներկայացնել Հետաքրքրության հայտեր ներքոհիշյալ ծրագրերի համար՝

1. Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն /ՀՀ Արագածոտն մարզի 4 կառույցների ջրամատակարարման համակարգերի վերակառուցում ` Աղձք, Արագած, Վարդենուտ, Բազմաղբյուր; /ՀՀ Լոռու մարզի 1 կառույցի և Տավուշի մարզի 6 կառույցների ջրամատակարարման համակարգերի վերակառուցում` Սվերդլով, Արծվաբերդ, Կոթի, Այգեձոր, Չինչին, Հաղարծին, Նորաշեն IRFSP /TA/CQ-2016/016/1;
2. Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն /ՀՀ Գեղարքունիկի մարզի 4 կառույցների ջրամատակարարման համակարգերի վերակառուցում` Արտանիշ, Մեծ Մասրիկ, Վերին Գետաշեն, Ջուլաքար / IRFSP /TA/CQ-2016/016/2;
3. Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն / ՀՀ Շիրակի մարզի 5 կառույցների, ջրամատակարարման համակարգերի վերակառուցում` Ձիթհանքով, Մառնաղբյուր, Գուսանապուղ, Ջաջուռ, Ջրառատ; /ՀՀ Սյունիքի մարզի 4 կառույցի և Վայոց Ձորի մարզի 1 ջրամատակարարման համակարգերի վերակառուցում ` Տաթև, Շենաթաղ, Լոր, Գորայք և Ագատեկ/ ՀՀ Սյունիքի մարզի 6 կառույցների ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում ` Ագարակ, Ալվանք, Կարճևան, Լեհվազ, Մեղրի, Շվանիձոր/ IRFSP /TA/CQ-2016/016/3

Աշխատանքների նպատակը՝

Խորհրդատուն պետք է մատուցի շինարարության որակի տեխնիկական հսկողության մասնագիտական խորհրդատվական ծառայություններ համաձայն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 1998թ.-ի ապրիլի 28-ի թիվ 44 հրամանով հաստատված "ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԻ":

Որակավորումը՝

Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնող խորհրդատու կազմակերպությունը պետք է ունենա հետևյալ որակավորումը՝

- Խորհրդատուի հիմնական աշխատակազմը պետք է ունենա բարձրագույն շինարարական կամ մասնագիտական (հիդրոշինարարական, էներգետիկ և այլն) կրթություն, համապատասխան փորձառություն և որակավորում;
- Բավարար քանակի հսկիչներ միաժամանակ տարբեր համայնքներում և կառույցներում ինժեներական ենթակառուցվածքների շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար;
- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման արտոնագիր;
- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման փորձառություն;
- Հագեցվածություն որակի հսկողության ժամանակակից գործիքներով ու սարքերով, տրանսպորտային միջոցներով, համակարգչային ու գրասենյակային տեխնիկայով;

Հայտում ներառվող փաստաթղթերը՝

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով՝ նշելով, թե որ ծրագրի/երի մրցույթին է ցանկանում մասնակցել;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Խորհրդատուի ընդհանուր փորձը և այլ անհրաժեշտ տվյալներ
- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման արտոնագրի /լիցենզիայի/ պատճենը;
- Վերջին 3 տարիների ընթացքում շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման փորձառության վերաբերյալ տեղեկատվություն;
- Աշխատակազմի ցանկը և դրանց աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),
- Որակի հսկողության համար գործիքների, սարքերի, տրանսպորտային միջոցների, համակարգչային ու գրասենյակային տեխնիկայի ցանկը;
- Հայտը համատեղ ներկայացնելու դեպքում ՀԶԳ-ի պայմանագիրը;

Հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Խորհրդատուների որակավորման և փորձի գնահատման չափանիշները հետևյալն են՝

- Ընկերության ընդհանուր փորձը (տարիների քանակը) համապատասխան ոլորտում /10 միավոր/
- Վերջին երեք տարիների ընթացքում կնքված նմանատիպ պայմանագրերի քանակը /10 միավոր/
- Հիմնական աշխատակազմի ընդհանուր փորձը և որակավորումը /20 միավոր/
- Հիմնական աշխատակազմի ծրագրին առնչվող փորձը և որակավորումը /50 միավոր/
- Ընկերության հագեցվածությունը անհրաժեշտ տեխնիկայով /10 միավոր/

Ընդամենը՝ 100 միավոր

Ամենահամապատասխան որակավորումներով և փորձով ընտրված Խորհրդատուն կներկայացնի համատեղված Տեխնիկական - Ֆինանսական առաջարկ և այնուհետև կհրավիրվի պայմանագրային բանակցությունների:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ 12 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ՄԶՕՇ-ի կողմից 1982թ. նոյեմբերին հրապարակված

Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2016թ. ապրիլի 26-ը, ժ.17:00:

ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ

Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4,6 հարկ;

Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 54 – 65 -10; e-mail: procurement@raed.am